ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1075-Ա « 21 » մարտի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի
Հ. 4466-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Թևոս Հովհաննիսյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 15-ի հ.4466-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Բարձրացված հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել՝ Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 15-ի հ.4466-Ա որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.8790 վկայագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի 13.02.2024թ. հ. ԱՏ-13022024-01-1211 տեղեկանքը:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով, հաշվի առնելով աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Ն/5128-24 եզրակացությունը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 15-ի «Երևան քաղաքի Ներքին Չարբախի 2-րդ փողոցի հ.34 և 13-րդ փողոցի հ.27 հասցեներում գտնվող տնամերձ, ինչպես նաև գյուղատնտեսական նպատակով հատկացված հողամասերի հողհատկացման հիմքերը վերականգնելու և 600.0քմ մակերեսով տնամերձ հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ Պետրոս Հովհաննիսյանի սեփականության իրավունքը ձևակերպելու մասին» հ. 4466-Ա որոշման մեջ «Պետրոս Հովհաննիսյան» և «1200.0քմ» բառերը փոխարինել համապատասխանաբար՝ «Թևոս Հովհաննիսյան» և «1142.30քմ» բառերով:

2. Սահմանել որ, Ներքին Չարբախի հ.40 հասցեում գտնվող՝ 1142.30քմ մակերեսով հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ